



## Ուղերձ տան սեփականատերերին՝ հարկային տեսուչ **Jeffrey Prang**-ից

Շնորհավոր Ձեր տան գնումը: Ես աշխատում եմ անշարժ գույքի մասնագետների հետ Լոս Անջելես վարչաշրջանի ամբողջ տարածքում՝ օգնելու դա դարձնել դրական փորձառություն և օժանդակելու Ձեզ՝ խուսափել ընդհանուր ծուղակներից, որոնք կարող են հանդիպել անշարժ գույքի հարկման գործընթացում: Կարևոր է, որ Դուք մի քանի բույսեր տրամադրեք վերանայելու հետևյալը:

### **Տարեկան գույքահարկ**

Տարեկան հարկային հաշիվները փոստով ուղարկվում են տարին մեկ անգամ, մինչև նոյեմբերի 1-ը: Առաջին մուծումը չվճարված է համարվում, եթե վճարումը չի ստացվել կամ դրոշմակվել մինչև դեկտեմբերի 10-ը և երկրորդ մուծումը չվճարված է համարվում, եթե վճարումը չի ստացվել կամ դրոշմակվել ապրիլի 10-ին: **Եթե Դուք չեք ստացել Ձեր հարկային հաշիվը մինչև նոյեմբերի 1-ը, կարող եք զանգահարել 1.888.807.2111 և պահանջել «փոխանորդ հաշիվ»:**

Թեև էսթրոնի ընթացքում որոշ հարկերը համամասնորեն բաշխվում են գնորդի և վաճառողի միջև և յուրաքանչյուրին տրվում է համապատասխան կրեդիտ, տարեկան բոլոր գույքահարկերը չեն, որ կարող է այդ ժամանակ վճարված լինել հարկահավաքին: Ջանգահարելով գույքահարկի տեղեկատվության **1.888.807.2111** հեռախոսահամարով, կարող եք ճշտել, արդյո՞ք կան վճարման ենթակա հարկեր և թե ի՞նչպես ձեռք բերել հարկային փոխանորդ հաշիվ, եթե անհրաժեշտ է: **Նահանգային օրենքի համաձայն, հարկերը վճարելը Ձեր պատասխանատվությունն է, անկախ նրանից, ստացե՞լ եք հաշիվ, թե՞ ոչ:**

### **Անշարժ գույքի հավելյալ հարկեր:**

Տարեկան հարկերից բացի, Դուք կարող եք պատասխանատու լինել հավելյալ գույքահարկեր վճարելու համար: Հավելյալ հաշիվները հիմնված են հին գնահատված արժեքի և Ձեր նոր գնահատված արժեքի (որն ընդհանուր առմամբ Ձեր գնման զինն է) տարբերության վրա: Այս գումարը համամասնորեն բաշխվում է հիմնվելով Ձեր կողմից տունը գնելու օրվանից մինչև ֆինանսական տարվա վերջը մնացած ամիսների քանակի վրա: Եթե գույքը վերագնահատված է նախկին հաշվարկված արժեքից ավելի ցածր արժեքով, Դուք կստանաք հատուցում:

**Հավելյալ հարկային հաշիվները Ձեր պատասխանատվությունն են և փոստով ուղղակիորեն Ձեզ կուղարկվեն Գանձապահի և Հարկահավաքի գրասենյակից՝ Ձեր գնումից մոտավորապես 6 ամիս անց: Ընդհանրապես այս հաշիվները չեն վճարվում գրավադրված հաշվեհամարներից (impound accounts):**

### **Տան սեփականատիրոջ ազատումը հարկերից**

Եթե Դուք Ձեր տան սեփականատերն եք և այն զբաղեցնում եք որպես Ձեր հիմնական բնակավայր, Ձեզ հասնում է սեփականատիրոջ ազատում հարկերից, ինչը նվազեցնում է Ձեր գույքի հարկը տարեկան մոտավորապես 70 դոլարով: Հարկերից ազատման դիմում կատարելու համար բարի եղեք լրացնել և վերադարձնել կցված դիմումի ձևը:

Ինքս լինելով տան սեփականատեր, ես պարտավորված եմ ըստ կարողության անելու այն ամենը, ինչը Ձեզ համար հնարավորին չափով կհեշտացնի անշարժ գույքի հարկի գործընթացը: Եթե ունեք որևէ հարցեր, մի՛ հապաղեք զանգահարել իմ անձնակազմին անվճար հեռախոսահամարով՝ **1.888.807.2111**, ընտրեք \* (աստղանշան) 6, և/կամ այցելեք մեր կայքը՝ [assessor.lacounty.gov](http://assessor.lacounty.gov).